Մի օր ընկերոջս՝ Ալլենի հետ (ում հետ սովորել ենք «Այբ»-ում, իսկ հիմա էլ կազմել ենք մեր ընտանիքը) սրճարանում նստած խոսում էինք և քննարկում, թե ինչ գործով պետք է զբաղվենք: Այդ ժամանակ մենք սովորում էինք համալսարանի նախավերջին կուրսում՝ բիզնեսի բաժնում: Եվ չնայած առաջին կուրսից աշխատել էինք, բայց զգում էինք, որ հասունացել է մեր գործը ստեղծելու պահը:

Ես այդպես էլ չհասկացա, թե ինչպես խոսակցությունը կանգ առավ ստեղծարար ընկերություն բացելու վրա, բայց մեր երկուսի աչքերն էլ Tom and Jerry մուլտֆիլմի Թոմի սրտիկ աչքերով վառվեցին, քանի որ վստահ էինք, որ մենք կհաջողենք: Գնանք այդ օրվանից 4 տարի հետ, երբ մենք սկսել էինք աշխատանքներ իրականացնել դպրոցի մեդիա թիմում, որտեղ լուսաբանում էինք դպրոցի կյանքը, անում ֆոտոներ, պատրաստում ինչ-որ հավես տեսանյութեր: Մեդիա թիմում արած աշխատանքը տարիներ անց պետք է դառնար հիմքը մեր մարքեթինգային ընկերության:

Այսօր արդեն 5 տարի է, ինչ կա մեր հիմնած ընկերությունը՝ Reezalt Creative Labs-ը, որը շուկայի առաջատարներից է, իրականացրել է 1000+ նախագիծ ՀՀ-ում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում և Եվրոպայում:

Այս ամենը անշուշտ չէր լինի, եթե ժամանակին մեզ հետ դպրոցում այդքան չաշխատեին, մեր ամենատարբեր գաղափարներին հավանություն չտային, չաջակցեին, չուղղեին և չսովորեցնեին:

«Այբ» դպրոցում կրթությունը իրականում միայն գերազանց հայերեն, մաթեմատիկա, քիմիա կամ այլ առարկա սովորելով չի սահմանափակվում: «Այբ»-ը տալիս է կրթության տեսանկյունից ամենակարևորը՝ սովորելու գործիքակազմ, որի միջոցով հետագայում, լինի դա համալսարան, աշխատանք, թե նոր գործի նախաձեռնություն, դու կարող ես գտնել «ի՞նչ անել, ի՞նչ սովորել և ինչպե՞ս» հարցերի պատասխանները:

Շատ հնարավոր է, որ մի օր իմ աշխատանքային ոլորտը, նախասիրությունները փոխվեն: Մտքեր ունեմ առաջիկայում հետաքրքիր կոնցեպտով ռեստորան բացելու, որտեղ կուզենամ տեսնել բոլորիդ: Շատ հարցեր և գաղափարներ կան, բայց այնքան հաճելի է գիտակցել, որ վախ չկա նոր բաներ փորձելու, սովորելու, գուցե նաև չհաջողելու:

Այբ
կրթական հիմնադրամ

Այբարար

Վախ չկա, քանի որ մեզ սովորեցրել են անընդմեջ սովորել՝ տարբեր առարկաներ, հմտություններ, տարբեր իրավիճակներում աճել և զարգանալ:

«Այբ»-ի տված կրթությունը տվել է «ինչպես անել, որ ստացվի» հարցի համար տարբեր գործիքներ, որոնք գուցե իդեալական չեն ամեն պարագայում, բայց նրանց միջոցով դու կարող ես ստանալ այն բանանձևը, որը կաշխատի հենց քո նպատակներին հասնելու համար:

Եվ, ի վերջո, հաղթում է նա, ով հավատում է իր հաղթանակին: Իսկ մեզ հավատացել և մեր մեջ ներդրում է ունեցել մի ամբողջ համայնք:

«Այբարար» դառնալու և «Այբ»-ի գաղափարը շարունակելու համար միացե՛ք ամսական նվիրատվությունների համակարգին: Ձեր աջակցությունը կուղղվի «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդին:

«Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի սովորում է ուսման վարձի փոխհատուցման՝ կրթաթոշակի շնորհիվ: Կրթաթոշակային ֆոնդը հնարավորություն է տալիս ցանկացած երեխայի, որն ընդունվել է ավագ դպրոց, անկախ ընտանիքի ֆինանսական վիճակից, ստանալու համաշխարհային մակարդակի մրցունակ կրթություն:



Սիրարփի Ղասաբյան
«Այբ» ավագ դպրոցի շրջանավարտ

donate.ayb.am